ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 5, 1964 Общественные науки

Ա. Ասատրյան

ՀԱԿՈԲ ՊԱՐՈՆՅԱՆԸ ԵՎ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍԲՎԱՃՅԱՆԸ

Առաջին անդամն է նշվում հայ գեղարվեստական մշակույթի խոշորագույն դեմքերից մեկի՝ հանճարեղ երգիծարան Հ. Պարոնյանի (1843—1891) հոբելյանը՝ նրա ծննդյան 120-ամյակի առիթով: Եվ կարծես մոտ կես տարի հետաձգումով, այս տարվա մայիսին է կատարվում այս մեծ հոբելյանը, որպեսզի այդպիսով նշվի նաև Պարոնյանի նշանավոր նախորդի, անձնվեր բարեկամի ու գաղափարական գինակցի՝ Սրվանյանի մահվան 90-ամյակը ևս, որ լրանում է հենց այս մայիսին:

Ուրախառիթ այս զուգադիպությունից անկախ, հանճարեղ երգիծարանի նշանակալից հոբելյանը պարտավորեցնում է, ի լիվս նրա կյանքի ու գործունեության բազմաթիվ հարցերի, անդրադառնալու նաև «Պարոնյանը և Սրվանյանը» բնմային:

1

Սովետական գրական-պատմաբանասիրական գրականության մեջ Սրվանյան-Պարոնյան հարցին առաջին անգամ, թեև բռուցիկ, բայց լուրջ դիտողությամբ՝ անդրադարձել է Ա. Գ. Հովհաննիսյանը դեռ 1930-ական թվականների սկզբին՝ Միք. Նալբանդյանի առնչությամբ: Նշելով այն փաստը, որ 1870 թ. Սրվանյանն սկսեց «Մեղուի» հրատարակության նոր շրջանը», բայց 1872 թ. «Մեղուն» հանձնեց Հ. Պարոնյանին, պատմաբան-բանասերն, այնուհետև, ասում է, որ «Հ. Պարոնյանի... երգիծարանական ժանրի և դեմոկրատական ուղղության հախապատրաստողներից էր հենց Սրվանյանը»2:

Միանգամայն ճիշտ է գիտված հայ դեմոկրատական մշակույթի երկու մեծ՝ նախտավորների գործունեության կապն ու նրանց հաջորդական տեղը, թե՛ հասարակական-գաղափարական շարժման և թե՛ գեղարվեստական գրականության զարգացման պատմության մեջ:

Մոտ երեք տասնամյակ հետո հրապարակած իր նշանավոր երկհատորյա մենագրության մեջ, նորից անդրադառնալով Սրվանյան-Պարոնյան հարցին, պատմաբանն ավելի որոշակի ու հիշզրիտ է արտահայտում նրանց պատմա-գաղափարական կապը: Սրվանյանին բնութագրելով որպես «սահմանադրական կրիզիսի տարիների արևմտահայ հրապարակախոսության ամենաառաջավոր դեմքը», հեղինակը նշում է, որ *«արևմտահայ հասարակական մտքի ու գրականության առաջ նա բացեց արդասավոր այն ուղին, որով հետագայում քայլելու էր Հ. Պարոնյանը»*3:

Հիմնարար այդ միտքն ունենալով, հարկավ, գիտնականը չի անտեսում և այն իրողությունը, որ արևմտահայ գրականության մեջ՝ Սրվանյանից բացի ու նրա հետ զուգընթաց միաժամանակ, երգիծարանության նորարաց ուղու սկզբին եղել է և ուրիշ մի նախահայր: Ժամանակին

---

1 *Մինչև վերջերս Հ. Պարոնյանի ծննդյան ստույգ տարեթիվը հայտնի չէր, բայց ընդունված էր մի հիմնական տարեթիվ՝ 1842-ը: Անցյալ տարի բանասեր Գ. Ստեփանյանը «սփյուռքահայ մամուլում տպագրված արխիվային փաստաթղթերում» հանդիպել է Պարոնյանի ծննդյան ստույգ տարեթվին՝ 1843, նոյեմբեր (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 3, էջ 137. Դ. Խ. Ստեփանյան, Հակոբ Պարոնյանին վերագրվող մի քանի ծածկանունների մասին): Ի դեպ հիշենք, որ այս տարեթվի գործածությունն անցյալի գրականությունից՝ հանդիպում ենք Յուրի Վեսելովսկու «Очерки армянской литературы» (1906 թ.) աշխատության մեջ:*

2 *Մ ի ք. Ն ա լ բ ա ն դ յ ա ն, Անտիպ երկեր, խմբագրություն և կոմենտարներ Աշոտ Հովհաննիսյանի, 1935, Երևան—Մոսկվա, էջ 766:*

3 *Ա շ ո տ Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն, Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք առաջին, 1955, էջ 400:*

Միհ. Նալբանդյանի ուշադրությունը գրված Թոռնակ Կրկոռիկյան ծածկանունը կրող հեղինակի «Ընդունելություն ընծայի» վերնագրով գրությունը (1855 թ.) Հովհաննիսյանն, իրավամբ, համարում է «Նոր հայ երգիծաբանական գրականության սկզբնավորումը ազդանշող երկ»[4]:

Բայց նիշտ կլիներ ասել, որ այստեղ խոսքը հայ գրականության *արևմտյան* հատվածին է վերաբերում. արևելյան հատվածում երգիծաբանական գրականության սկզբնավորումն ազդանշող երկերը՝ հայ նոր գրականության հիմնադրի՝ Խ. Աբովյանի առակների գիրքն է («Պարապ վախտի խաղալիք», 1841 թ.) և «Հազարփեշեն» երգիծաստոնեմը:

Բայց դառնանք «Ընդունելություն ընծայի» գրությունին:

Տեղին է ու կարևոր հիշել, որ Նալբանդյանից դեռ մի քանի տարի առաջ, Թոռնակ Կրկոռիկյանի երկը գրված է եղել նախ Սրվանյանի ուշադրությունը: «Մեղուի» հենց առաջին տարվա մի համարում Սրվանյանը տպագրում է երգիծաբանական բնույթի քննադատություն[5], նույն այն կղերական հեղինակի մասին, որի «Ընծան» այնքան փայլուն տաղանդով ծաղրված է Թոռնակ Կրկոռիկյանի «Ընդունելություն ընծայի» գրությունում: «Մեղուի» անծանոթ հեղինակը (թերևս ինքը՝ Սրվանյա՞նն է Հ. Տոլաստյան ծածկանունով), ձայնակցելով Թ. Կրկոռիկյանին, նրա ոգով ծաղրում, մերկացնում է կղերամիտ վարդապետ Խապառանյանի պապականության քարոզը:

Արևմտահայ գրականության մեջ երգիծաբանության սկզբնավորման շրջանում հրատարակվել են նաև մի քանի երգիծական պարբերականներ, բայց Սրվանյանի «Մեղուն» է այն գլխավոր հիմնարար ու առաջատար օրգանը, որն իր առաջին տասնամյա (1856—1865) բազմաբնույթ գործունեությամբ՝ արևմտահայ գրականության մեջ հաստատորեն հիմք է դնում երգիծաբանությանը: Հենց այս նշանավոր առաջադեմ պարբերականի պատմության մեջ բնական զարգացման շղթայով միանում են «Մեղուի» հիմնադիր-խմբագրի և նրա կրտսեր, բայց մեծ ժամանակակցի—Պարոնյանի ստեղծագործական կյանքի տարեգրությունները, այնպիսի օրգանական միասնությամբ, որ երկրորդի հանդես գալն առանց առաջինի չի կարելի պատկերացնել:

Սրվանյանին գնահատելով իբրև Պարոնյանի արժանավոր նախորդը, համոզված, որ նրանց ստեղծագործությունները սերտորեն կապված են օրգանական միասնությամբ, միևնույն աշխարհայացքային հիմունքներով ու սոցիալական-քաղաքական իդեալներով, մենք, իհարկե, հետու չենք մեծ երգիծաբանի գրական-գեղագիտական ուսումնասիրության և կրած բարերար ազդեցությունների աղբյուրը Սրվանյանով սահմանափակելու մտքից: Սակայն առաջնահերթ փաստն այն է, որ Սրվանյանը Պարոնյանի անմիջական նախորդն ու ավագ ժամանակակիցն է, որի հետ մեծ երգիծաբանն իր գործունեության առաջին շրջանում կապվում է գաղափարական զինակցությամբ, նաև համատեղ աշխատանքով՝ «Մեղուի» վերջին տարիների հրատարակության ընթացքում: Արևմտահայ գրական-գեղագիտական մտքի զարգացման ընթացքի բերումով օբյեկտիվորեն Սրվանյանն է դառնում երիտասարդ Պարոնյանի առաջին գրական ուսուցիչներից մեկը, և՝ հասկանալի է, ոչ միակը: Պարոնյանի ստեղծագործական հանճարն իր ամբողջության ու մեծության մեջ կազմավորվել է երգիծաբանական գրականության և ընդհանրապես գեղարվեստական գրականության համաշխարհային մեծությունների համապարփակ մթնոլորտում, հին հունա-հռոմեական գրող-մտածողներից սկսած մինչև իր գործունեության սկզբնավորման ժամանակը: Բայց ինչքան էլ մեծ լինի տվյալ գրող-արվեստագետը, այնուամենայնիվ, նրա մեծության հիմքն ու պատվանդանը ոչ թե այլ ժողովուրդների, այլ իր մայր ժողովրդի գեղարվեստական մշակույթի նախընթաց զարգացման այն աստիճանն է, որին հանդիպում է նա իր ստեղծագործական կյանքի առաջին քայլերը կատարելիս:

Պարոնյանը հայ երգիծաբանության և ընդհանրապես հայ գեղարվեստական մշակույթի լեռնապարի բարձրագույն գագաթներից մեկն է, որի ստեղծագործական կյանքի արևելյան հորիզոնում Սրվանյանն է կանգնած, իսկ արևմտյան հորիզոնում՝ նրա արժանավոր հաջորդը՝ Երվանդ Օտյանը և այլ հետնորդներ:

---

4 *Այստեղ, ի դեպ նշենք, որ Նալբանդյանին, հավանաբար հայտնի էր, թե ով էր թաքնված վերոհիշյալ ծածկանվան տակ, բայց չի գրել այդ մասին։ Իսկ մեր բանասիրության մեջ մինչև վերջերս այդ գրքույկը վերագրվում էր Ռանիկ Արամյանին։ Անճիշտ գտնելով այդ ենթադրությունը՝ Ա. Դ. Հովհաննիսյանը, ինչպես ինքն է արտահայտվում՝ «շտկում է» նաև իր սխալը՝ հավանական համարելով, որ Թոռնակ Կրկոռիկյան ծածկանունով հանդես է եկել ոչ թե Ռ. Արամյանը, այլ խաչատուր Միսարյանը (տե՛ս* Աշոտ Հովհաննիսյան, *Նալբանդյանը և նրա ժամանակը, հատոր 2, 1956, էջ 437)։*

5 *Տե՛ս՝ «Մեղու», 1856, էջ 155—167։*

2

Թե ե՞րբ են Սրվանձյանն ու Պարոնյանը հանդիպել, ծանոթացել, ստույգ հայտնի չէ: Ելնելով նրանց երկուսի էլ կենսագրական փաստերից, կարելի է միայն որոշ ենթադրություններ անել այդ մասին: Հայտի է, որ Պարոնյանը 1863 թ. Անդրիանապոլսից տեղափոխվում է [4]. Պոլիս և այստեղ բնակվում իր հորեղբորորդի, Նալբանդյանի բարեկամ, նշանավոր բժիշկ, Քյաթիպյանի[6] տանը: Եվ քանի որ նրա հետ՝ մոտիկ ծանոթ ու բարեկամ էր նաև «Մեղուի» խմբագիրը, ապա՝ անկասկած այդ ժամանակվանից է, որ Պարոնյանը հանդիպել է Սրվանձյանին, հավանաբար նաև Նալբանդյանին, և այդ ժամանակվանից էլ (18 տարեկանից սկսած) ժողովրդի «մաքուր բերանով» խոսող «Մեղուն» պատում է նրա սիրելի պարբերականը՝ հանդիսանալով պատանի Պարոնյանի գրական-երգիծաբանական «նախակրթարանը»:

Երբ հնգամյա ընդմիջումով դադարեց (1865 թ. հունիսի վերջերից) Սրվանձյանի «Մեղուն», երիտասարդ Պարոնյանն իր ստեղծագործական կյանքի առաջին քայլերն էր կատարում: Իսկ երբ Պարոնյանը լրագրության ասպարեզ է մտնում 1870 թ. սկզբներին՝ հրատարակելով «Փող առավոտյան»[7] երգիծաբերթը, Սրվանձյանի «Մեղուն» դեռևս հարկադրված էր իր «փեթակի մեջ փակված մնալ»: Իսկ երբ Պարոնյանը նույն տարվա վերջերից սկսում է աշխատակցել Սեմեոն Ֆելեկյանի «Եփրատ» պարբերականին, հենց նույն ժամանակ Սրվանձյանը ձեռնարկում է իր «Մեղուի» վերականգնմանը: 1870 թ. սեպտեմբերի 10-ին լույս է տեսնում «Մեղուի» նոր շրջանի առաջին համարը: Պարոնյանը դեռ շարունակում է աշխատակցել «Եփրատին», իսկ 1871 թ. հոկտեմբերից մինչև 1872 թ. հուլիսը ներառյալ՝ նա խմբագրում է այդ թերթը: Բայց «Եփրատի» խմբագրությունը ստանձնելուց առաջ՝ 1870 թ. սեպտեմբերից Պարոնյանը միաժամանակ սկսում է կանոնավորապես աշխատակցել «Մեղուին»: Եվ երբ 1872 թ. հուլիսին «Եփրատի» հրատարակությունը վերջնականապես խափանվում է՝ «օր մը առանց հրամանի հրատարակված ըլլալուն համար»[8], Պարոնյանը մի նոր պարբերական հրատարակելու մասին չի մտածում. նա իրեն արդեն ճաստատապես կապված է զգում Սրվանյանի «Մեղուի» հետ, որի էջերում պարբերաբար լույս էին տեսնում նրա երգիծաբանական մանրապատումները, մեծ մասամբ այլ և այլ ծածկանուններով, մասամբ և առանց ստորագրության:

Թե ի՞նչ է գրել Պարոնյանն իր խմբագրած առաջին երգիծաբերթում («Փող առավոտյան», 1870 թ.) և ապա՝ «Եփրատում» (1870—1872 թթ.), հայտնի չէ:

Պարոնյանի նախա«մեղու»ական շրջանի ստեղծագործությունից որոշակիորեն հայտնի են միայն նրա առաջին կատակերգությունները («Երկու տերով ծառա մը» և «Ատամնաբույժն արևելյան»), որոնք մեծ երգիծաբանի բազմաժանր ստեղծագործության հիմնական ժանրերից մեկի, ինչպես և նրա, որպես գրողի ստեղծագործական կյանքի սկիզբն են նշանավորում: Բայց Պարոնյանն իր ստեղծագործական բազմաժանրությամբ հաստատորեն հանդես է գալիս Սրվանյանի «Մեղուի» այս երկրորդ շրջանում: Այստեղից է դրսևորվում նրա հանճարատիպ տաղանդի բազմերանգությունը և ստեղծագործության բեմատիկ ու գաղափարական ընդգրկումների լայնությունը, արևմտահայ (դեռևս գերազանցապես պոլսահայ) կյանքի բազմակողմանի անդրադարձումով:

---

6 *Նալբանդյանի հետ բարեկամացած է եղել ոչ թե Մարգար Քյաթիպյանը (ինչպես ասված է Մ. Նալբանդյանի ԵԼԺ-ի IV հատորում, էջ 408), այլ նրա որդին՝ նշանավոր բժիշկ Հովհաննես Քյաթիպյանը (1821—1882), որը Փարիզից Պոլիս վերադառնալուց հետո ոչ միայն իբրև բժիշկ, այլև որպես ակտիվ ազգային հասարակական-քաղաքական գործիչ հանրածանոթ դեմք էր։*

7 *Իր առաջին այդ պարբերականի անունը ընտրելիս՝ Պարոնյանը հավանաբար նկատի է ունեցել Կարապետ Փանոսյանի «Մանդումնի էֆիար» հայատառ թուրքերեն թերթի վերնագիրը՝ վերցնելով սրա հայերեն թարգմանությունը՝ «Փող առավոտյան»։ Երգիծաթերթը շատ կարճատև կյանք ունեցավ՝ Պարոնյանին հաջողվեց հրատարակել միայն 28 համար։*

8 *«Ազգային ջոջեր» երգիծական դիմանկարներից մեկում («Սեմեոն Ֆելեկյան») իր խմբագրած այդ պարբերականի մասին Պարոնյանը գրում է. «Վերջերը Եփրատ ուրիշներուն, ինչպես նաև այս տողերը գրողին խմբագրությանն ներքև ալ հրատարակեցավ, բայց վերջապես օր մը առանց հրամանի հրատարակված ըլլալուն համար՝ իսպառ խափանեցավ» (Հ ա կ ո բ Պ ա ր ո ն յ ա ն, Ընտիր երկեր, գիրք 1-ին, 1954, էջ 370)։*

Թե ինչպիսի արժանիքներով է Սվաճյանը Պարոնյանի անմիջական նախորդը և գրական-գաղափարական պայքարի ի՞նչ ավանդներ է նա թողել իր գործը շարունակողին,—այդ հարցերին պատասխանելու համար հնարավոր չէ այստեղ տալ Սվաճյանի գրական-հրապարակախոսական գործունեության գեթ համառոտ նկարագրությունը. ուստի բավական ենք համարում հիշել մի քանիսն այն բնութագրումներից, որ տվել են ժամանակակիցները Սվաճյանին, որպես հրապարակախոսի ու երգիծաբանի, որպես 19-րդ դարի արևմտահայ ամենաառաջավոր դեմոկրատական օրգանի հիմնադիր-խմբագրի:

Միանգամայն օրինաչափ է այն, որ Սվաճյանի ու նրա «Մեղուի» գործունեության առաջին ճշմարտացի բնութագիրը տվել է դարաշրջանի ամենաականավոր դեմքը, հայ հեղափոխական դեմոկրատական հոսանքի առաջնորդը՝ Միքայել Նալբանդյանը՝ իր հայտնի հրապարակախոսական հոդվածում («Ազգային թշվառությունք», «Հյուսիսափայլ», 1864 թ., № 3, էջ 158—174):

Անհնար է 19-րդ դարի 3-րդ քառորդի արևմտահայ դեմոկրատական շարժման պատմությունը ճիշտ հասկանալ ու մեկնաբանել՝ առանց դիմելու այդ նշանակալից վավերագրին, որի մեծ մասը նվիրված է Սվաճյանի ու նրա «Մեղուի» գործունեությանը: Նալբանդյանն զգուշանում է և ոչ մի անգամ չի հիշատակում իր անձնվեր բարեկամի ու մարտական զինակցի անունը, հիշում է միայն նրա հռչակավոր Մեչուխնչային և ամեն տեղ Սվաճյանի գրական-հրապարակախոսական գործունեությունը ներկայացնում է նրա պարբերականի անունով:

Մեծ հեղափոխականի պատկերացումով «Մեղուն» Սվաճյանն էր, Սվաճյանը՝ «Մեղուն», որպես արևմտահայերի ազգային-սահմանադրական շարժման մարտական տրիբուն, «երիտասարդների և ժողովրդի *մաքուր-բերանը*, ազգի ցավերի և ուրախության ճշմարտապես հայտարարը»:

Նալբանդյանը Սվաճյանի հրապարակախոսության և երգիծանքի ներգործուն ուժի արդյունքն է համարում խավարամոլների կատաղությունը «Մեղուի» դեմ, որի էջերում, որպես հայելու մեջ, արտացոլվում էր նրանց «ճիվաղային կերպարանքը»:

Նալբանդյանի տված բնութագրմանը համահնչյուն է մի այլ նշանավոր ժամանակակցի, արևմտահայ դեմոկրատիայի խոշորագույն դեմքերից մեկի՝ Մատթեոս Մամուրյանի տված բնութագիրը:

Մամուրյանի բնութագրման մեջ ուժգնորեն արտահայտված է մեծանուն ժամանակակցի ու բարեկամի անսահման հիացմունքն ու ոգևորությունը Սվաճյանի նկատմամբ, որի մարդկային-բարոյական ու գաղափարական կերպարը բացառիկ հմայքով վեր է բարձրանում բոլոր արևմտահայ առաջադեմ գործիչների շարքում: Այս անվանի ժամանակակցի վկայությամբ՝ Սվաճյանի նայվածքի մեջ իսկ շեշտակի արտահայտվում էր *երգիծաբանի բնավորության հիմնական գիծը՝ «ամեն բանի ծուռ և թյուր կողմը նշմարելու» հակամիտությունը և «հեղնալի ժպիտը», որ գերազդեցիկ ներշնչման ուժ ուներ «ամենեն զգոն մարդկանց» նկատմամբ իսկ*:

Սվաճյանին Մամուրյանը համեմատում է Դեմոկրիտի հետ՝ նրանից տարբերելով խոր ժողովրդայնության, ջերմ, անձնվեր մարդասիրության և անհուն հայրենասիրության ոգով մարտնչող հրապարակախոս, որն օժտված է նաև երգիծաբանի հզոր տաղանդով՝ ամեն տեսակի մոլությունների ու բռնության նկատմամբ անհաշտ ատելությամբ լցված: «Հայոց Դեմոկրիտն ես—գրում է Մամուրյանը, բայց չէ՛ թե անզգա, մարդատյաց Դեմոկրիտն, այլ հրահանգիչ, մարդասեր անձ մ'որու հոգին հայերու վշտաց վրա լալու ատեն՝ շրթունքն անոնց թերությանց վրա կծիծաղին. գրիչդ մոլությունները կը հարվածե և մոլիները տարտարոս կղրկե: Սակայն ամենեն կծու և անգութ ծիծաղդ դաս մ' ունի, ամենեն թունավոր սլաքդ՝ սպեղանի մ' ունի, ամենեն մահացու ռումբդ լույս մ' ունի: Ինչ որ գիրքեր, ճառեր, քարոզներ չեն կրցած ընել, դու մի քանի համեղ, հատու և հրատապ գրավոր խոսքով կատարած ես» («Արևելյան մամուլ», 1872, էջ 261—262):

Սվաճյանի գաղափարական դեմքի բնութագրման մեջ Մամուրյանը շեշտում է և նրա գերազդեցիկ ղեկավար դերը, որպես քաղաքական գործչի, որի հրապարակախոսությունը սահմանադրական-դեմոկրատական շարժման ուղեցույց է եղել, իսկ նա ինքը՝ Սվաճյանը ժողովրդական տրիբուն, անձնուրաց դեմոկրատ գործչի, առաջատար մարտիկի ոգեշունչ օրինակ՝ անվեհեր կանգնած ամեն բռնակալության դեմ:

Ժամանակակիցներից Ռերենցն էլ Սվաճյանի մահից մի քանի ամիս հետո անդրադարձել է նրա ստեղծագործական դեմքի բնութագրմանը. *«Սվաճյանը, յուր Մեղուին խայթոցովը զինյալ՝ կը հարձակվի ընդդեմ տգիտության, ընդդեմ բռնավորության, ընդդեմ նախապաշարմանց, ընդդեմ ապօրինության, ընդդեմ անիրավության և ով որ դիմացը կգտնի՝ կաթողիկոս, պատրիարք, ամիրա, առաջնորդ, ժողովրդապետ, եկեղեցական և աշխարհական, բան մը չխնայեր, կրկոխե կանցնի»*

Տերենցը Սվաճյանին բնութագրում է իբրև «ազգին գրական զինվոր», որն իր անձնուրաց կյանքով *«ազգին բարոյական պատնեշներուն վրա կը մեռնի երիտասարդ»* (նույն տեղում, 1874, էջ 476—477):

Հարկ կա՞ ասելու, որ հենց այդպիսին էր Սվաճյանի մեծանուն հաջորդը, որը նույնատիպ գրական գործիչ էր, նույն բնավորության երգիծաբան, բայց, իհարկե, նրա համեմատությամբ՝ գեր-գերազանց ստեղծագործական տաղանդով օժտված:

3

Սվաճյանն իր «Մեղուի» նոր շրջանն սկսեց նախընթաց տասնամյա շրջանի գաղափարական ուղղությունը հետևողականորեն շարունակելու ծրագրով, հավատարիմ մնալով դեմոկրատական լուսավորության գաղափարախոսական իր սկզբունքներին՝ հաստատված «Հյուսիսափայլի» հրապարակախոսության առաջատար գծի համադրումով, Նալբանդյանի աշխատակցության փորձով ու նրա մեծ ավանդների ոգով:

Սվաճյանը չէր մոռանում «Մեղուի» անցած՝ փորձություններով լի ուղին: Բայց նա նորից համարձակորեն հանդես է գալիս և այն էլ զգալիորեն փոխված պայմաններում՝ մնալու իր մեծ զինակցի հետ նշված գաղափարական դիրքերում, որպես իր ճնշված ազգի առաջադիմության և ազատագրական պայքարի դրոշակակիր, նրա լուսավոր ապագայի համար մաքառնող «երիտասարդների և կենդանի ժողովրդի *մաքուր բերանը,* ազգի ցավերի և ուրախության ճշմարտապես հայտարարը»9:

Հենց այդ ոգով է գրված «Մեղուի» նոր շրջանի ծրագրային «Հայտարարությունը», ուր հիմնադիր-խմբագիրնազդարարում է իր խմբագրական-գաղափարական դիրքավորման, իր դեկավար սկզբունքի մասին: Իր կոչմամբ լինելով ժողովրդի կենսական շահերը հավատարմորեն պաշտպանող օրգան, սակայն, հանուն հենց այդ շահերի «Մեղուն»,—գրում է Սվաճյանը,—«երբեք չերթար ժողովուրդին ետևեն կույր զկուրայն, չհնազանդիր անոր քմացն ու հաճույից», այլ միշտ՝ «ժողովուրդին սխալ ըմբռնումները ուղղելու համար կռվի պիտի և շատ անգամ անոր անհաճո պիտի ըլլա...»:

Մեղուն... իր 1856-ի առաջադրությունն պիտի պահի, միշտ ազգին օգտին աշխատելու համար, խայտառակելով այն ամեն մոլությունները, այն ամեն պակսությունները, որ միշտ վնասակար ճանչված են ազգի մը հառաջադիմությանը, ժողովուրդին աչքին առջև պիտի դնե իրեն բարեկամ ձևացող մարդերուն խաբեբայությունները՝ թեև այդ անձերը շատ սիրելի եղած ըլլան իրեն:

«Մեղուին» այս համոզումը,—ասված է այդ «Հայտարարության» վերջում,—նվիրական է և չկրնար երբեք փոխել, վասնզի գիտե, որ ժողովուրդը պիտի փոխե իր համոզումը, իր գաղափարները և իր ընթացքին նպատակը»: «Մեղուն» չի ձգտում ժողովրդականություն նվաճել՝ *«ժողովրդին միշտ ծափահարելու» հեշտ,* բայց վնասակար ու կործանարար միջոցով, համոզված, որ *«ժողովրդին միշտ ծափահարողները ժողովուրդին ծպտյալ թշնամիներն են, կեղծավոր պատառաքույծներն են՝ անոր ամենամեծ վնասներին ու կորուստներին իրենց փոքրիկ օգուտ մը հանել փափագող»*10:

Առաջադեմ օրգանի, մանավանդ՝ երգիծական պարբերականի և ընդհանրապես երգիծաբանական գրականության ժողովրդայնության ահա այս ճիշտ ըմբռնումով ու ծրագրով է Սվաճյանը վերսկսում իր պարբերականի նոր շրջանը, որը զուգադիպում է Պարոնյանի ստեղծագործական կյանքի սկզբնական հնգամյա շրջանին, երբ նա իր մտքի բնականոն զարգացման ընթացքով և անկասկած՝ «Մեղուի» նախընթաց շրջանի բարերար ազդեցությամբ, գալիս, միանում է «Մեղուին», կանգնում նրա գաղափարախոսական, ըստ որում և գրական-գեղագիտական դիրքերում, Նալբանդյանի ու Սվաճյանի զինակցությամբ հաստատված մարտական դիրքերում:

Եվ եթե «Մեղուի» նախընթաց փառապանծ տասնամյակը նշանավորվում է դարաշրջանի հայ հեղափոխական-դեմոկրատական մտքի ու ազատագրական պայքարի ռահվիրաների—Նալբանդյանի ու Սվաճյանի գաղափարական զինակցությամբ, ապա՝ «Մեղուի» նոր ու վերջին շրջանն էլ նշանավորվում է մի նոր զինակցությամբ՝ հեղափոխական դեմոկրատիզմի և գրականության-արվեստի նալբանդյանական ավանդներին հավատարիմ Սվաճյանի և այն հան-

---

9 *Մ. Նալբանդյան, ԵԼԺ, հ. 3, էջ 107։ Ընդգծումները բնագրային են։*

10 *«Մեղու», 1870, թիվ 16, «Հայտարարություն»։ Ընդգծումները մերն են։*

նարավոր երիտասարդ երգիծաբանի ու ժողովրդանվեր գրական-հասարակական գործչի զինակցությամբ, որի երգիծաբանական ստեղծագործությամբ հայ գեղարվեստական մշակույթի զարգացումը հասավ աննախընթաց բարձրության:

Պարոնյանի մեծության, նրա հասարակական-քաղաքական և գեղարվեստական մտքի հասունացման մարտադաշտը գլխավորապես Սրվանձյանն էր պատրաստել: Այդ մարտադաշտում գործեց Պարոնյանը 1870—1874 թթ.:

1870 թ. սեպտեմբերյան մի համարում Սրվանձյանի մի նոր աշխատակիցը՝ Գ. Հովակիմյան ստորագրությամբ, «խինդ ի սիրտ» ողջունելով «Մեղուի» վերածնությունը, գրում է. *«Երգիծանքը՝ գաշույն մ՚է հոռիին համար, նետ մ՚այն տիկնայց, որք մոռնան թե մայր են..., վերջապես զենք մը, ուսկից չարք ու տկարք կ՚երկնչին»*[11]։

Ո՞վ է այս անծանոթ հեղինակը,—մենք ենթադրում ենք, որ նա «Մեղուի» նոր աշխատակից երիտասարդ Պարոնյանն է: Այդ երևում է նրա ոճից և մանավանդ երգիծանքի դերի ու նշանակության նրա ըմբռնումից: Իհարկե, չպետք է կարծել, թե «Մեղուի» նոր աշխատակցի ըմբռնումով երգիծանքը զենք է միայն հասարակության ներքին բարոյական կյանքի արատների դեմ և ոչ թե նաև հասարակական-քաղաքական պայքարի զենք:

4

1871 թ. փետրվարից է սկսվում Սրվանձյանի և Պարոնյանի խմբագրական համագործակցությունը: Ավելի քան մեկ տարվա աշխատակցության փորձից, Սրվանձյանը համոզվում է, որ հանձին իր նոր, երիտասարդ աշխատակցի, նա ունի վստահելի ու անփոխարինելի, տաղանդավոր զինակից, որը թե՛ իբրև երգիծաբան և թե՛ իբրև խմբագրող՝ հուսալի հենարան էր ամենադժվարին պայմաններում «Մեղուի» գործունեությունն անխափան շարունակելու համար:

Այդ մասին Սրվանձյանը հարկ է համարում հրապարակորեն հայտնելու «Մեղուի» ընթերցողներին: Մի հատուկ ազդով նա ծանուցում է, որ իր «անձնական գործերը չէին ներեր՝ միօրինակ զբաղվելու լրագրույս խմբագրության ու հրատարակության» գործով, որի հետևանքով էլ՝ «ցարդ անկանոն կերպով հրատարակվեցավ «Մեղուն»... բարեբախտ կրհամարինք զմեզ այսօր ծանուցանելու կարող ըլլալու, թե՝ այսուհետև պիտի կրնանք կանոնավոր կերպով շարունակել լրագրույս հրատարակությունը, վասն զի ստացանք պատվական բարեկամի մը ձեռնտվությունը, որ հաճեցավ ինք ալ *Մեղուին* տալ իր անձնական զբաղմունքին ավելցած ժամանակը:

Պ. Հակոբ Հ. Պարոնյան այս օրեն սկսելով՝ մեզի միացած է *Մեղուի* խմբագրության պաշտոնին մեջ և հանձն առած է նաև գործակալությունն ալ»[12]:

Սա հիմնադիր-խմբագրի առաջին պաշտոնական ծանուցումն է, որով ընթերցողները տեղեկանում են, որ երիտասարդ երգիծաբանը «Մեղուի» խմբագրության հիմնական աշխատակիցն է, որի հետ է կապվում թերթի անխափան հրատարակությունը: Սրվանձյանը, հասկանալի է, լռում է այն մասին, թե՝ Պարոնյանն իբրև գրող-ստեղծագործող, ինչպե՛ս և ի՛նչ չափով է մասնակցում թերթին, որը լույս էր տեսնում համարյա ամբողջությամբ այլ և այլ ծածկանուններ կրող կամ զգալի չափով էլ անստորագիր նյութերով:

Հարկավոր եղավ Պարոնյանի ստեղծագործական աշխատակցության ու «խմբագրական օգնականության» ընդամենը երկու տարվա ժամանակամիջոց, որպեսզի Սրվանձյանը տեսնի, համոզվի, որ հանձին իր նոր աշխատակցի, ինքն ունի արժանավոր փոխարինող, որին կարող է լիովին վստահել տնօրեն-խմբագրի դժվար պարտականությունը:

Ահա այդ համոզմունքի արտահայտությունն է «Մեղուի» 1872 թ. նոյեմբերի 4-ի՝ նոր շրջանի 101-րդ համարում հրապարակված շատ ուշագրավ «Հայտարարությունը», որով և կանխորոշվում է թերթի հիմնադիր խմբագրի ու արտոնատիրոջ և նոր խմբագիր-անօրենի փոխհարաբերությունը:

Այդ «Հայտարարությունը» տպագրված է թերթի առաջին էջի առաջին սյունակում և ըստ էության խմբագրական առաջնորդող հոդվածի նշանակություն ունի և իր բնույթով յուրահատուկ «հաշվետվություն» է ընթերցողին: «Վերջապես,—գրում է Սրվանձյանը,—գլուխ պատռելով, աշք հանելով՝ Մեղուին առաջին շրջանը լրացուցինք...: Շաբաթը երկու թերթ հրատարակել որոշած էինք... Ատեն եղավ, որ ամիսը մեկ թերթ մը ելավ, ատեն եղավ, որ այնչափ ուշացավ, որ *Մեղուի* բարեկամները *Մեղուն* մեռավ հրատարակեցին ու հռչակեցին»:

---

11 *«Մեղու», 1870, սեպտ. 19, № 3։ Ընդգծումները մերն են։*

12 *«Մեղու», 1871, փետրվար, № 38, «Ազդ»։*

Անա այդպիսի դժվարին պայմաններում13, նկատելով, որ ինքը անկարող է բերքի անխափան, կանոնավոր հրատարակությունն ապահովելու, բարեկամներից «շատերը կրսին մեզի.— շարունակում է Սրվանյանը.—որ օդնական մը գտնենք: Բայց, թե՛ դրելու կարող և թե՛ *Մեղուին* արդյունքովը անոթի մնալ հանձն առնող անձ մը դտնել որչափ դժվար էր»: Եվ անա վերջապես, այժմ ուրախությամբ հայտարարում է, որ «դտել» է արդեն, ըստ ամենայնի, կարող հազվադեպ «անձ մը»: «*Մեղուին*, թե՛ անոր ընթերցողներուն, չգիտենք որին բախտն էր, որ այս օրերս ձեռք անցուցինք այնպիսի բարեկամ մը, որ վերոհիշյալ երկու հատկություններուն վրա՝ ազդին անկուտի ծառայելու հատկությունն ալ ավելցուցած է. ասի արդեն ծանոթ է ժողովրդին երբեմն *Եփրատա* խմբագրությամբը ու կարն միջոց մ՝ ալ *Մեղուի* խմբագրական օգնականությամբը»:

«Ուստի վստահ ենք, որ... այսուհետև *Մեղուն* կանոնավոր կերպով շարաբը երկու անգամ պիտի հրատարակվի»14:

Վերջում Սրվանյանը հայտարարում է ի գիտություն, թե՛ բարեկամների և թե՛ հակառակորդների, որ «*Մեղուի*» տնօրինությունը, խմբագրությունը, գործակալությունը, վերջապես ամեն ներությունը պ. Հ. Պարոնյանին հանձնված է՝ *մեզ վերապահելով երբեմն անոր խմբագրության օգնականությունը*» (այս վերջին ընդգծումը մերն է. Ա. Ա.):

5

Հակառակ «Հայտարարության» ընդգծված այդ տողերի որոշակի նշանակությանը, Սրվանյանին և Պարոնյանին վերաբերող գրականության մեջ այն կարծիքն է տիրապետում, թե՛ «Մեղուի» տնօրեն-խմբագրությունը հանձնելով իր գործն արժանավորապես շարունակող Պարոնյանին, Սրվանյանն այլևս հեռանում է խմբագրական-հրապարակախոսական ասպարեզից և «Մեղուի» գործունեությունն այնուհետև ամբողջովին ու անվերապահորեն ենթարկվում է Պարոնյանին, իսկ հիմնադիր-խմբագիրը որևէ մասնակցություն չի ունենում գործին:

Բայց այդ կարծիքը սխալ է և անա թե ինչու:

Առաջին անգամը չէր, որ Սրվանյանն իր «Մեղուի» խմբագրությունն ու տնօրինությունը հանձնում էր այլ՝ իր համար վստահելի անձանց, բայց միշտ էլ իր հրապարակական ծանուցումներում նշում էր, որ ինքը բոլորովին չի հեռանում գործից:

Այսպես՝ 1863—64 թթ. «Մեղուի» իրավազոր պաշտոնական խմբագիրներն են եղել նախ Հովհաննես Հովույանցը և ապա՝ Աբրահամ Դ. Մուրադյանը, այնուհետև՝ մի որոշ ժամանակ էլ Արմենակ Հայկունին15: Սրվանյանի հրապարակային ծանուցումների համաձայն՝ նրանց հանձնվում էր «Մեղուի» տնօրեն-խմբագրի պարտականությունը և իրավունքը, բայց ինքը՝ *հիմնադիր-խմբագիրը*, որ միաժամանակ և պարբերականի արտոնատերն էր, *բոլորովին չէր հեռանում գործից, այլ մնում էր պատասխանատու «Մեղուի» գործունեության ընթացքի և գաղափարական*

---

13 *Սրվանյանի մահից մի քանի ամիս հետո՝ «Մեղուի» գործուն աշխատակիցներից նշանավոր Հովսեփ Շիշմանյան-Մերենցը, որ Սրվանյանի գաղափարական բարեկամներից էր, բայց լիբերալ թեքումով՝ «Արևելյան մամուլում» տպագրած իր «Թղթակցության» մեջ գրում է, որ Սրվանյանը «Մեղուն քանի մը տարի երեսի վրա կթողուր՝ ածուխի, աղյուսի, հանքի ետևե պտրտելով, լեռները չափելով, արևուն շողին, ձյունին, սառին հետ կընկներ կելներ, օրապահիկը հազիվ հայթայթելով...» («Արևելյան մամուլ», 1874, նոյեմբեր, էջ 475—476)։*

14 *Մինչև այդ «Մեղուն» հրատարակվել էր հետևյալ պարբերականությամբ. 1856—1858 թվականներին—«հանդես կիսամսյա»—երկշաբաթերթ—փոքր ծավալով, 1859—1862 թթ.—10-օրյա թերթ՝ մեծադիր ծավալով, 1863—1865 թթ.—«հանդես շաբաթական», իսկ նոր շրջանում՝ 1870 թ. սեպտեմբերից՝ հրատարակվում էր իրրև 3-օրյա թերթ, բայց անկանոն, զգալի հապաղումներով, այնպես որ 26 ամսում (2 տարի և 2 ամիս) հրատարակվել է ընդամենը 100 համար, այսինքն ամսական ոչ թե 10, այլ 3—4 համար միայն։*

15 *Սրվանյանին փոխարինող այդ խմբագիրներից ամենից ավելի ականավոր դեմք էր Արմենակ Հայկունին (Ա. Հ. Ծիզմեճյան) (1838—1866) արևմտահայ դեմոկրատական մտավորականության շատ առաջադեմ գործիչներից մեկը, որին վաղաժամ մահը խլեց գրական ու քաղաքական գործունեության ասպարեզից։ Մինչև «Մեղուի» տնօրեն-խմբագրի պարտականությունը հանձն առնելը՝ Ա. Հայկունին հրատարակում էր նախ «Մուսայք մասյաց» պարբերականը (1857—1858), որն առաջին գրական-թատերական հանդեսն էր հայ մամուլի պատմության մեջ։ Այնուհետև Դր. Չիլինկիրյանի հետ միասին նա խմբագրում էր «Մաղիկ» հանդեսը (1861—1865), որը Սրվանյանի «Մեղուի» գաղափարական ուղեկիցն ու զինակիցն էր։*

ուղղության համար։ Իսկ «Մեղուի» նոր տնօրեն-խմբագիրներն էլ հրապարակով հայտնում էին իրենց «ուխտը», որ իրենք հավատարիմ են մնում՝ «Մեղուի» սկզբեն ի վեր բռնած ընթացքին», նրա դավանանքին ու գաղափարական ուղեգծին16։ Հիշենք նաև այն, որ տնօրեն-խմբագրի պարտականություններից հրաժարվելով և այդ պարտականությունը համապատասխան անձանց հանձնելով, ինքը՝ Սրվանձյանն իրեն ազատ չէր համարում «Մեղուի» գործունեության նկատմամբ ունեցած պատասխանատվությունից և անհրաժեշտության դեպքում հանդես էր գալիս կտրուկ, մինչև անգամ Ազգային վարչության քաղաքական ժողովի ատենապետին հասցեագրված հրապարակային հայտարարությամբ, որ թերթի «դրության պատասխանատուն ես ինքս եմ»17, որ «ով ինչ կուզե թող ըսե. *Մեղուն* իր մեղրը կըշինե»18։ Այդ նշանակում է, որ *Սրվանձյանին փոխարինող տնօրեն-խմբագիրները գործում էին հիմնադրի անմիջական ու գործուն ղեկավարությամբ և որ ուրեմն՝ բոլոր տարիներին «Մեղուի» գաղափարական ղեկավարը նա ինքն էր՝ Սրվանձյանը,* որ անձնուրաց նվիրվածությամբ ու անդուլ եռանդով առաջ էր տանում արևմտահայ դեմոկրատիայի մարտական օրգանի աշխատանքը՝ Նալբանդյանի գործուն աշխատակցությամբ որոշված ուղղությամբ։

Անա այս հայեցակետից պետք է դիտել նաև՝ «Մեղուի» երկրորդ շրջանի գործունեությունը, որը նշանավորվում է հիմնադրի և նոր աշխատակցի ու խմբագրի գաղափարական զինակցությամբ։ *Այս երկրորդ շրջանում Պարոնյանի հետ ունեցած համագործակցության և համատեղ պայքարի առաջատար-ղեկավար դեմքն, անշուշտ, դարձյալ «Մեղուի» հիմնադիրն է,* թեև նրա երիտասարդ զինակիցն արդեն կանգնել էր ինքնուրույնության ճանապարհին։

«Մեղուի» վերջին տարիների գործունեության մեջ Սրվանձյանի դերի նվազեցումով ու անտեսումով՝ ամենևին չի ավելանա Պարոնյանի անկշռելի վաստակը, որը ոչ մի հավելման կարիք չունի։ Ուստի և անարդարացի է, երբ բանասերներից ոմանք՝ «Մեղուի» վերջին երկու տարվա գործունեությունը նշում են միայն Պարոնյանի անունով, ասելով՝ «Պարոնյանի «Մեղուն», կարծես թե՝ «Մեղուն» այլևս հիմնովին նոր ուղղության օրգան է՝ անկախ Սրվանձյանից։

Ինչպես նախորդ շրջանի տնօրեն խմբագիրների, նույնպես և Պարոնյանի խմբագրության օրով «Մեղուի» հասարակական-գաղափարական ուղղությունը և նրա ընդհանուր բնույթը, որպես գրական-երգիծաբանական ու հրապարակախոսական օրգանի, ամենևին չի փոխվել, քանի որ միշտ էլ՝ *սկզբից մինչև վերջ, «Մեղուի» ղեկի մոտ կանգնած է եղել մեծանուն հիմնադիրը և «Մեղու» ասելով՝ միշտ էլ նախ և առաջ ու գլխավորապես Սրվանձյանն է պատկերացվել։*

Իհարկե, պետք է լուրջ վերապահություն անել՝ Պարոնյանին «Մեղուի» ղեկավարման գործում մյուս ժամանակավոր խմբագիրների հետ համեմատելիս։ Ըստ որում, թեև չի կարելի հերքել, որ օրինակ՝ Արմենակ Հայկունին (Ար. Ճիզմեճյան) էլ «Մեղուի» խմբագիր-տնօրեն եղած ժամանակ, նույնպես գրել է իր խմբագրած այս թերթում ևս, ինչպես գրում էր մինչ այդ իր խմբագրած մյուս պարբերականներում (նախ՝ «Մուսայք մասյացում»՝ 1857—1858 թթ. և ապա՝ «Մաղիկում»՝ 1861—1863 ու 1865 թթ.), այնուամենայնիվ Հայկունու դերը 1864 թ. «Մեղուի» գործունեության մեջ նույնը չէ, ինչ որ Պարոնյանինը՝ 1870—1874 թթ.։ Բայց և այնպես ինչքան էլ, անկասկած, մեծ է Պարոնյանի գրական-ստեղծագործական բաժինը և նրա, իբրև խմբագիր-տնօրենի դերը «Մեղուի» կյանքում, թերթը չի կարելի կոչել միայն նրա անունով։ Մանավանդ հարկ է նկատի ունենալ, որ Պարոնյանի խմբագրության շրջանն, ընդամենը 15 ամիս է (մեկ ու կես տարուց էլ պակաս)։ Կարելի՞ է ասել, թե «Մեղուն», այդ կարճատև շրջանում հիմնովին փոխվեց թե՛ գաղափարական և թե՛ գրական-գեղարվեստական առումով,—ամենևին ո՛չ։ Իր հասարակական-գաղափարական դիրքավորումով և իր գրական-գեղագիտական դավանանքով, իր լեզվով ու ոճով, իր բովանդակության ընդհանուր պրոբլեմատիկայով, «Մեղուն» շարունակում էր ընթանալ միևնույն սրվանձյանական ուղղությամբ, բայց իհարկե հարստացած ու թարմացած երիտասարդ Պարոնյանի եռանդուն աշխատակցությամբ ու խմբագրությամբ։

Այս ամենից հետո առավել կարևոր է հիշել, որ ինքը՝ Պարոնյանն էլ Սրվանձյանին համարում է «Մեղուի» գաղափարական ղեկավարը սկզբից մինչև վերջը՝ ներառյալ 1872—1874 թթ.։ Նա ևս, ինչ որպես խմբագիր-տնօրեն պատասխանատվություն ուներ հիմնադրի առաջ։

16 *Աբրահամ Գ. Մուրադյանը «Մեղու»-ի 1863 թ. ապրիլի 9-ի համարում հայտարարում է, որ իր նախորդը (Հ. Հովսյանը) հիմնավոր պատճառով «լրագրույս խմբագրությունը ձգել պարտավորելով, անոր առ ազգն մատուցանելիք* այս ծառայությունը մենք հանձն առինք, սա ուխտով, որ՝ հավատարմությամբ հետևենք Մեղուին սկզբեն ի վեր բռնած ընթացքին, որով Մեղուն արդեն շատ օգտակար եղած է մեր սիրելի ազգին» *(«Մեղու», 1863, ապրիլի 9, № 194)։*

17 *«Մեղու», 1863, դեկտ. 3, № 224, էջ 321, «Հ. Սրվանձյանի նամակը ատենապետին»։*

18 *«Մեղու», 1863, դեկտ. 13, № 225, էջ 329, Հ. Գ. Ս ր վ ա ն ձ յ ա ն, «Ազդ»։*

Սրվանձյանի հանձնարարությամբ ստանձնելով «Մեղուի» տնօրեն-խմբագրի պարտականությունը և ունենալով *արտոնատիրոջ «խմբագրական օգնականությունը»*, երիտասարդ Պարոնյանը հետևողականորեն շարունակում է երգիծաբերի սրվանձյանական ու նալբանդյանական ավանդները: *Իր հավատարմությունը*, այլև *պատասխանատվությունը թերթի արտոնատիրոջ ու գաղափարական ղեկավարի առաջ*, Պարոնյանն արտահայտում է հրապարակորեն մի առանձին բաց նամակ-զեկույցով, խմբագրությունն ստանձնելուց մոտ մեկ ու կես ամիս հետո (1872 թ. դեկտ. 16), այս բնորոշ վերնագրով. *«Խմբագիրն Մեղուի առ տերն Մեղուի»*: Ծպված է սա թերթի առաջին երեսի առաջին սյունակում, անստորագիր, իբրև առաջնորդող: Գրված է երգիծական ոճով, բայց խորին ակնածանք է արտահայտում նոր խմբագիրը՝ երբ հաշիվ է տալիս արտոնատիրոջը՝ թե ինչպե՛ս է ընթանում գործը, ինչպե՛ս է կատարվում նրա «պատվերը», «հրամանը»:

Ուշագրավ է նամակ-զեկույցի սկիզբը, որով խմբագիրն իր խոսքն ուղղում է հիմնադիր արտոնատիրոջը.

«Այն բանը, որուն համար պատվիրեցիր, ըրի՛, ո՛վ քաջ»—գրում է Պարոնյանը և նրա հետագա խոսքերից պարզվում է, թե՝ ինչի՛ մասին է «պատվիրել» Սրվանձյանը՝ «Մեղուի» խմբագրությունն ու տնօրենությունը իրեն՝ Պարոնյանին հանձնելիս: —Նա «պատվիրել» ու «հրամայել» է շարունակել պայքարը հայ կյանքում եղած ամեն տեսակի մոլությունների, այլանդակությունների դեմ, մամուլի այլևայլ օրգանների ու պատրիարքարանի ազգավնաս ընթացքի դեմ: «Հայոց մոլությանց համար հրամայած էիր, որոնց մեջ արդեն կգտնվեիքնք ես ալ, դուն ալ, հարուստներն ալ, աղքատներն ալ, քաղաքացիներն ալ, պատրիարքարանն ալ, պատրիարքարանին ձիերն ալ»:

«Նամակի» վերջում ասված է.

«Այս ամենը գրեցի, որ կարդաս, մեր վիճակին տեղեկանաս: Այլ դու, *ո՛վ մեծ ի գիտությունս մոլությանց, միշտ աղեկ բաներու կը հրամայես, զոր աննենգ սիրտեն գիտնալով, հրաժեշտ տվինք մեր ծուլության...: ...Եվ որովհետև սիրով ընդունեցինք ձեր հրամանը և սկսանք ուրկից որ արժան էր, շարունակենք մեր գործը, թեպետ և ոչ նվազ արտասվոք կը խնդանք մեր ազգին մոլության վրա, որոնց շատերուն ականատես և ականջալուր իսկ ենք»*[19]:

Սրվանձյանի վերը հիշված «Հայտարարությունից» հետո և սկսած թերթի նույն այն համարից, ուր տպագրվել է «Մեղուի» նոր խմբագիր-տնօրենի մասին ազդարարող այդ ուշագրավ վավերագիրը, թերթի ամեն մի համարի վերջում դրվում է երկուսի ստորագրությունն էլ միևնույն գծի վրա՝ այս հաջորդականությամբ.

Տէր — Խմբագիր-տնօրէն
Յ. Գ. ՍՐՎԱՃՅԱՆ — Յ. Յ. ՊԱՐՈՆՅԱՆ

Իսկ 1873 թ. ապրիլի 18-ի № 131-ից սկսած մինչև վերջին՝ 1874 թ. մարտի 9-ի համարը, ստորագրությունները դրվում են նոր հաջորդականությամբ.

Խմբագիր-տնօրէն — Տէր-լրագրոյ
Յ. Յ. ՊԱՐՈՆՅԱՆ — Յ. Գ. ՍՐՎԱՃՅԱՆ

Հետաքրքրական և ուշագրավ է, որ երբեմն թերթի նոր խմբագիր-տնօրենի (այսինքն՝ Հ. Պարոնյանի) անվան փոխարեն տրվում է նրա մասին հիշեցնող երգիծական բնույթի ծանուցում-մակագրություն և կամ թերթի արտոնատիրոջ (այսինքն՝ Սրվանձյանի) անվան փոխարեն՝ նշվում է որևէ ծաղրանկար, որի մեջ դրական իմաստով գերիշխող դեմքը Մեղու-Սրվանձյանն է: Օրինակ, 1872 թ. նոյեմբերի 18-ի № 105-ը պատրաստված է այսպես.

Տէր — Խմբագիր-տնօրէն
Յ. Գ. ՍՐՎԱՃՅԱՆ — Այվազին[20] ականջները քաշող

Թերթի հետևյալ՝ նոյեմբերի 22-ի համարի վերջում՝ աջ կողմում նշված է՝ *«Խմբագիր-տնօրէն Յ. Յ. Պարոնյան»*, իսկ ձախ կողմում, Սրվանձյանի անվան փոխարեն՝ հետևյալը.

«Տէր, տես պատկերին մեջ Այվազին վրա»:

Ակնարկված «պատկերը» թերթի նույն համարի 3-րդ էջի վերևի մասում տեղավորված մի

---

19 *Հ. Պարոնյան. Եկ, հ. 10, էջ 295—296։ Ընդգծումը մերն է։*

20 Այվազը—*«Մամուլ» կոչված «զավեշտական հանդեսի» (1869—1882) «շարագիր-տնօրենն՝ Գեորգ Հ. Այվազյանն» է, որի անձնավորությունն՝ իր խմբագրած պարբերականով հանդերձ, Պարոնյանի բազմաթիվ երգիծական էջերի հիմնական նյութն է՝ ամենասուր, սպանիչ քննադատություններով թե՛ «Մեղուի» մեջ, և՛ թե հետագա իր հրատարակած պարբերականներում։*

ծաղրանկար է՝ «Իշակառք», որի մեջ նստած են (աջից-ձախ)՝ «Մանզումե», «Սետս», «Մասիս», «Օրագիր» և «Մեղու» պարբերականները խորհրդանշող դեմքերով՝ նստած՝ կառքին լծված էշ-Այվազի մեջքին:

Թե Սրվանձյանի «Հայտարարությունը» և թե «Մեղուի» համարների վերջում տրվող համատեղ պաշտոնական ստորագրությունները վկայում են այն մասին, որ իրենք, թերթի արտոնատերն ու նոր խմբագիր-տնօրենը «Մեղուն» ներկայացնում են ընթերցող հասարակությանը, որպես իրենց համագործակցության արդյունքը՝ արտոնատիրոջ ղեկավար պատասխանատվությամբ: Իսկ այս նշանակում է, որ Պարոնյանի տնօրեն-խմբագիր եղած ժամանակ, այսինքն՝ թերթի հրատարակության ամենավերջին մեկ և կես տարուց էլ պակաս ժամանակամիջոցում ևս՝ թերթի «խմբագրութենեն դադրած» լինելով հանդերձ՝ Սրվանձյանը ճանաչվում էր, որպես *«Մեղուին* հիմնադիրը, միանգամայն և տերը», որի «հանձնարարությամբ էր խմբագրության պաշտոնը վարում» Պարոնյանը: Եվ անշուշտ երիտասարդ խմբագիրը խորին հարգանքով ու ակնածությամբ ընդունում էր իր ավագ ընկերոջ ու բարեկամի, մանավանդ, որպես «մեծ ի գիտությունս մոլության» ղեկավար դերը «Մեղուի» գործունեության ընթացքում, քանի որ հրապարակային հայտարարությամբ իսկ Սրվանձյանն իրեն «վերապահել էր երբեմն անոր խմբագրության օգնականությունը»:

Սրվանձյանի հետ ունեցած համագործակցության տարիներին՝ «Մեղուն», որպես երգիծաբանական-հրապարակախոսական օրգան, Պարոնյանի ստեղծագործական կյանքի անբաժան ուղեկիցը դարձավ, նրա սոցիալական-քաղաքական և բարոյական ու գեղագիտական ըմբռնումները մարմնավորող խորհրդանիշ, և նրա ստեղծագործության մեջ հանդես եկավ, որպես մարդկային վսեմ գաղափարների, գեղեցիկի, ճշմարտության, արդարության, սիրո, եղբայրության, ազնվության, անկեղծության, շիտակ մարդկայնության մարմնավորում:

Ինչպես նախընթաց շրջանում Սրվանձյանն էր «Մեղուի» անունից կամ նրա բերանով խոսում, թերթը դարձել էր խմբագրի և ընթերցողի միջև հաստատված կենդանի կապի արտահայտիչ, «Մեղուն» էր հրապարակախոս երգիծաբանի մտքերի ու երազանքների իմաստուն թարգմանը, նրա ամենատես աչքն ու ամենալուր ականջը՝ աշխարհում, նրա զայրույթն ու ցասումն արտահայտող քաջարի զինվորը՝ պատերազմի դաշտում, վերջապես նրա ամբողջ էության մարմնավորումն իր ժողովրդանվեր կյանքով ու գործունեությամբ,—ճիշտ այդպես է ներկայանում «Մեղուի» կերպարը նաև Պարոնյանի ստեղծագործության մեջ:

Թե՛ «Մեղուին» աշխատակցելու և խմբագրելու տարիներին, և թե՛ հետագայում՝ Պարոնյանն հաճախ էր անդրադառնում «Մեղուի» գործունեության գնահատմանը իր երգիծանքի՝ մերթ բարեմիտ հումորով, մերթ այլաբանական-առակախոսական լեզվով: Բայց միշտ «Մեղուն» պատկերվում է իբրև ճշմարտության արտահայտիչ՝ ի տարբերություն և ի հակադրություն այն օրգանների, որոնց գոյությունը երաշխավորված էր իշխող դասակարգերի շահերի պաշտպանությամբ և որոնց դեմ մշտապես եռանդուն բանակռիվ էր մղում Սրվանձյանը մինչև Պարոնյանի հետ համագործակցելը:

Հիշենք «Մեղուի հոբելյանը» վերնագրով առակատիպ երգիծանքը (տպագրված է «Մեղուում»՝ 1873 թ. սկզբին): Այստեղ հանձին «տասնվեց տարվան աղվեսի՝ ներկայացվում է Կ. Ութուջյանի «Մասիսը», որին հակադրված է «Մեղուն» իր «քսանհինգերորդ ամսուն լրման առթիվ»:

Երգիծաբանը «Մեղուի» նոր շրջանի գործունեության առաջին քսանհինգամսյակը հոբելյանական է համարում և անհամեմատ առավել արդյունավետ, քան «տասնվեցտարվան աղվեսի» «ծառայությունը»:

Մինչդեռ «Աղվեսն» ապրում է շողոքորթությամբ հարուստներեն սնունդ մուրալով»,—«Ես — ասում է *Մեղուն* ... քսանհինգ ամիս մեղր շինած եմ և օգնած մարդկության»: «Աղվեսի» գանգատին, թե՝ ինքը «տասնվեց տարեկան ըլլալով՝ հոբելյանի մը չարժանացավ»,—Մեղուն պատասխանում է.

«—Երբ միայն շատ ապրողներուն հոբելյան կատարվեր՝ երեսունհինգ տարի հաջողությամբ ավազակություն ընողներն ալ այդ պատվուն արժանանալու էին»: Ուստի, եզրակացնում է երգիծաբանն իր «բարոյականով»՝ «երկու օրվան մեղուն ծեր աղվեսեն ավելի հարգելի է միշտ»[21]:

Ոչ միայն իր ժամանակի ամենաառաջադեմ հոսանքի մղած գաղափարական պայքարում, այլև իր՝ Պարոնյանի ստեղծագործական կյանքում «Մեղուի» ունեցած բացառիկ դերի գիտակցումն էր, որ մղում էր նրան հաճախ անդրադառնալու իր այս հարազատ պարբերականի գնահատմանը: Բայց չէ՞ որ «Մեղուից» առաջ Պարոնյանը խմբագիր-տնօրեն էր եղել երկու պարբերականների («Փող առավոտյան» 1870 թ. և «Եփրատ» 1871—1872 թթ.), որոնցից առաջինի մասին, երբ

21 *Հ. Պարոնյան, ԵԼԺ, հ. 5, էջ 14—15:*

չենք սխալվում, ոչ մի հիշատակություն չունի իր երկերում, իսկ երկրորդի մասին՝ հիշում է տխրությամբ, առանց որևէ դրական գնահատականի: Չնայած այն փաստին, որ Պարոնյանն իր ստեղծագործական կյանքի հենց նույն շրջանում նախ աշխատակցել է Ս. Ֆելեկյանի հիմնադրած պարբերականին, ապա և ավելի քան մեկ տարի էլ միաժամանակ դրա խմբագիրն էր, այնուամենայնիվ, նա որևէ հարգանություն չի արտահայտում այդ օրգանի նկատմամբ, երբ «Ազգային ջոջերի» շարքը դասելով «Եփրատի» հիմնադիր-խմբագրին, նշիշատակում է նաև իր աշխատակցության ու խմբագրության մասին, «Վերջերը *Եփրատ* ուրիշներուն, ինչպես նաև տոդերիս գրողին խմբագրությանն ներքև ալ հրատարակվեցավ, բայց վերջապես օր մը առանց հրամանի հրատարակված բլլալուն համար, իսպառ խափանեցավ: Այս խափանման վրա Ֆելեկյան էֆենտին ոտանավոր գրելով շտապեցավ»22:

Պարոնյանի պատմելու տոնի մեջ իսկ զգացվում է, որ նա ներքնապես ու հաստատուն կապված չի զգացել իրեն «Եփրատի», այլև նրա հիմնադիր-խմբագրի հետ: Եվ երբ վերջնականապես դադարում է «Եփրատը»՝ երիտասարդ երգիծաբանն արդեն հարազատացել էր Սրվանձյանի նրշանավոր պարբերականին և այնուհետև հաստատորեն շարունակում է կապված մնալ «Մեղուի» հետ, այլ պարբերական հիմնելու մտադրություն չունենալով, մինչև «Մեղուի» վերջնական դադարումը:

6

Սրվանձյանի սոցիալական երազանքն էլ իր զարգացման արտահայտությունն ունի Պարոնյանի ստեղծագործության մեջ: Սրվանձյանը երազում էր փողի-դրամի խեղաթյուրիչ զորությունից ազատ հասարակություն, որի հիմքը մարդկանց ազատ աշխատանքն է, նյութական բարիքների արտադրությունը՝ բոլորի մասնակցությամբ, բոլորի համար:

Առնչանքելով Նալբանդյանի սոցիալ-տնտեսական ծրագրին («Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ»), Սրվանձյանը երազում էր այն մասին, թե ինչպես այդ ծրագրի իրականացումը «պիտի փոխի մեր բշվառության, կարոտության և աղքատության շապիկը»23:

Սրվանձյանի և Պարոնյանի հայացքները լիովին համընկնում են փողի կեղծարար ուժի, դրամատիրական ֆետիշիզմի մերկացման գործում: Այս խնդրում ևս Պարոնյանը Սրվանձյանի դեմոկրատական հումանիզմի դիրքերումն է: Նա ևս մարդու մարդկայնությունը հակադրում է դրամի, նյութական հարստությամբ որոշվող բուրժուական բարոյականությանը:

Բայց նախ հիշենք Սրվանձյանին. դրամի կեղծարար ուժի նկատմամբ նրա հայացքների շատ ցայտուն հայտարարն է «Փարա վաստկե, որ մարդ բլլաս» հեգնական վերնագրով նրապարակախոսական հոդվածը (1862 թ.): Վերնագիրն իսկ բուրժուական փողապաշտական բարոյականության բանաձևն է, որի էության բացահայտմանն է նվիրված հոդվածը:

«Ուրեմն ինչե՞ր, — գրում է Սրվանձյանը, — թե իրա՞վ փարան է, որով մարդս մարդ բլնի», «Ուրեմն միակ փարա ունեցողնե՞ր մարդ են..., բայց տաղանդով շատ կրեսոսներ կառավարելու կարող մարդիկը՝ մարդոց շո՞ւքն են, թե՛ ուրվականը...», «Ուրեմն բաղդին բենիամիններ, որոնք շատ անգամ ժառանգական հարստություն մը կրվայելեն և իրենք իրոք ոսկերարծ էշեր բլլալով և ոչ կարիլ մը քիրտն բափած են ստակ մը շահելու, միակ անո՞նք մարդ են: Ուրեմն... ուրեմն ազգեր կազմող և ընտանիքներու տեր աղքատներ, որոնք դժբախտաբար ավուր հացը հորով ձեռք կրբերեն և ստակ դիզելու կարող չեն՝ մա՞րդ ալ չեն և մարդե մեբենանե՞ր են»: Եվ վերջապես՝ «ուրեմն մեր աղքատիկ ազգին մեծ մասը՝ փարայի տեր չբլլալուն համար Սոկրատես անփետուր կենդանիներ՞ն են»:

Այս հարցադրումները արդեն որոշակի պատասխան են պարունակում, պատասխանը՝ դեմոկրատական հումանիզմի ոգով, ի հակադրություն բուրժուական գաղափարախոսությանն ու բարոյականությանը: Ո՛չ, ասում է Սրվանձյանը, — *սուտ է այն խոսքը, որ կրսե, թե փարա վաստկե, որ մարդ բլլաս...:*

*«Մենք չենք ընդուներ ստակով մարդ բլլալու պայմանը. առանց ստակ ունենալու մարդ բլլալնիս կխոստովանիմք և ուրիշի ալ չենք ուզեր մեր մարդկությունը զոհել և ամեն, ով որ մարդը ստակով մարդ կը ճանչե, մարդ ըսվելու արժանավորությենե իրավ կրսեմք, որ զուրկ է»*24:

Մարդու և փողի նկատմամբ նույն այս նշմարիտ հումանիստական հայացքի անդրադարձումն ենք գտնում Պարոնյանի ստեղծագործության մեջ:

---

22 *Հ. Պարոնյան, Ընտիր երկեր, 1954, էջ 369—370։*

23 *«Մեղու», 1862, № 165, «Ով որ այսօր հող չունի, վաղը հաց չունի»։*

24 *«Մեղու», 1862, ապրիլի 30, № 160։*

Անխնա մերկացնելով փողի տիրապետության կեղծարար ուժի արդյունքը հանդիսացող մարդկանց բարոյական դեմքի խեղաթյուրումը, ունևոր դասակարգերի ցավ ու շվայտ կյանքը, ժողովրդական բազմությունների նյութական թշվառությունը՝ Պարոնյանն էլ՝ ըստ էության, երազում էր մի հասարակություն, որտեղ բացառված է փողի տիրապետությունը և ուրեմն՝ անհնար կլինի հասարակական դիրքն ու «փառքը ստակով գնելու»:

Իհարկե, Պարոնյանը չգիտեր այդպիսի հասարակության իրականացման ուղին, բայց նա իր խորապես դեմոկրատական առաջադիմական աշխարհայացքի բևեռով բարձրանում է իր դարաշրջանի դրամատիրական հասարակությունից շատ վեր, և իր անհաշտությունն արտահայտելով այդ նոր դպկալի հասարակարգի նկատմամբ, աշխատավոր ժողովրդի համար կենսականորեն ցանկալի էր համարում՝ բռնությունից, շահագործումից, կեղծիքից ազատ մարդկային հարաբերություններ: Այդ երազանքն է արտահայտում երգիծաքանի հիացական բացականչությունը. թե՝ «*Ինչ գեղեցիկ և սքանչելի դար է այն, ուր փառքն ստակով ծախու չառնվեր ...Այն դարուն մեջ, ուր մենք մեռնելու կաշխատինք, ամեն բան դրամով կը գնվի...*»[25]: Ցանկալին այն հանրակարգն է, որտեղ «*յուրաքանչյուր ոք յուր աշխատության պտուղն վայելի առանց դիպվածով հարստանալու կամ դրամով համբավ գնելու*»[26],—գրում է Պարոնյանը:

Սոցիալական-հանրային կյանքի ներդաշնակություն ու մարդկային երջանկություն երազող գրողն ու մտածողն իր երևակայության բռիչքով յուրովի պատկերացնում է մարդկությունը «1000 տարի վերջը»: Այդ բռիչքի անդրադարձումն ենք տեսնում «Արգոսի[27] մտածմունքներ» շարքի մի քանի հատվածում: «Երբեմն,—գրում է Արգոսն իր ոճով.—աշխարհիս գործերուն ընթացքեն ձանձրացած, կըշանամ ասկե շատ մը տարի ետքը մարդկության ունենալիք վիճակը երևակայել» և մարդկանց «երջանկության նամբան ցույց տալ»:

Արգոսի պատկերացումով իր ժամանակի հասարակությունից, մարդկության ապագան հիմնովին կտարբերվի ամենից առաջ նրանով, որ բոլոր մարդկանց նյութական ապահովության հետևանքով՝ իսպառ վերացված կլինի աղքատությունը, մուրացկանությունը: Այդ միտքն է արտահայտում նա, երբ գրում է. «Մարդոց ունենալիք կացությանը վերա ենթադրություններ ընելով... կը պատահի երբեմն, որ... ասկե 1000 տարի ետքը կարծելով՝ ինքզինքս, անմեկնելի սիրով և երջանկությամբ կը լցվիմ. դիմացս ելնողին բարև տալ կուզեմ, փողոցներու մեջ մուրացկաններ տեսնելով, զարմանալ կսկսիմ...»: Մեկ հազարամյակ հետո բոլոր մարդիկ բարոյապես ու հոգեպես վերափոխված կլինին, իրար հետ կկապվին համայնական սիրով, անսահման հարգատությամբ, այնպես որ իրար հանդիպելիս՝ «բարև պիտի տան և պիտի ըսեն՝ «բարի լո՛ւյս, կրսիրեմ զքեզ» և դիմացինն ալ պիտի ըսե՝ «ես ալ անանկ»:

Մարդկության երջանկությունն ապահովված կլինի և այն բանով, որ այլևս պատերազմ չի լինի, մարդիկ իրարու «չըպիտի մեռցուենն»:

Արգոսը մինչև իսկ կանխատեսնում է մեր դարաշրջանում իրականացող տիեզերագնացության հնարավորությունը. «Մեծամեծ *պալոններ* (այսինքն՝ օդանավեր. Ա. Ա.) պիտի շինվին, որոնց մեջ մարդիկ պիտի նստին և արևին, լուսնին ու բոլոր երկնքի սատղերուն մեջ նամբորդություններ պիտի ընեն»[28]:

Մարդկության ապագայի այս հեռանկարն Արգոսը պատկերում է նաև «Լուսինին մոտերը նամբորդություն մը» վերնագրով հատվածում: Այստեղ արդեն հեղինակը նկարագրում է իր երևակայական հանդիպումը «լուսնաբնակի» հետ, որից լսում է լուսնի վրա իրականացած մարդկային համայնական երջանկության մասին: «Լուսնաբնակ մարդը» Արգոսին պատմում է «իրենց

---

25 *Հ. Պարոնյան, Եվ, հ. 6, էջ 120։*

26 *Նույն տեղում, հ. 5, էջ 84։*

27 *Դրականագետ-բանասեր Գ. Ստեփանյանը վերը հիշատակված հոդվածում եզրակացնում է, թե՝ ի թիվս մի քանիսի, Պարոնյանին վերագրվող Արգոս ծածկանունն էլ նրանը չէ։ Թեև բանասերի փաստարկումներն ու եզրակացությունը, մասնավորապես Արգոսի նկատմամբ, բավականաչափ համոզիչ չեն, բայց եթե ընդունենք, որ իրոք այս Արգոսը մի այլ անձնավորություն է, այնուամենայնիվ՝ նա և Պարոնյանը համախոհ հեղինակներ են։ Եվ ուրեմն՝ հրապարակելով «Արգոսի մտածմունքները», մեծ երգիծարանը համախոհ էր նաև նրա սոցիալական երազանքին, որն ընթերցողներին հաղորդում է իր «Թատրոնի» բերանից։*

Ի դեպ, ասենք նաև, որ, Արգոսը համարելով Պարոնյանի ծածկանուններից մեկը, մեզ հայտնի է նաև մի այլ Արգոս, որը հանդես է եկել առավելապես Պարոնյանից հետո՝ 90—900-ական թվականներին։

28 *Հ. Պարոնյան, Եվ, հ. IX, էջ 163, «1000 տարի վերջը»։*

աշխարհին, իրենց կենաց, իրենց բարուց եղանակը»: Այնտեղ գոյություն չունի բոնապետություն, հաստատված է «հասարակապետություն», ուր մարդիկ խաղաղավետ կյանքով «հարյուր հիսուն կամ երկու հարյուր տարի կապրեն», «երբեմ մեզի պես պատերազմ չէին ըներ: Այս պատերազմին կտորին ալ չը դիմացա և գոչեցի. «Այդ ի՞նչ աղվոր բան»:

«Մենք կտեսնինք,—ըսավ ծանրությամբ «լուսնաբնակը»—մենք կրտեսնինք, *որ ձեր աշխարհին մեջ հաճախ զիրար կրջարդեն. ի՞նչ հարկ կա, չէ որ խաղաղությամբ ապրելը հազար անգամ ավելի աղեկ է*». «Զե՞ն կրնար միթե, փոխանակ զիրար փարատելու համար նորանոր հնարներ հոգալու, ամբողջ միտքերնին, բոլոր հոգերնին ա՛լ ավելի հառաջ երթալու տալ»,—ասում է «լուսնաբնակը»29:

«Բայց ավա՜ղ,—բեև տխրությամբ, բայց լավատեսորեն ամփոփում է Արգոսն իր երազանքը,—մենք պիտի չկրնանք տեսնել այն օրերը և երկար ատենե ի վեր հանգչած պիտի ըլլանք այն ծառերուն ոտքին տակ, որոնց վերա թռչուններն զարմանքով պիտի տեսնին, թե ինչպես մարդիկները՝ պալոններու վերա հեծած մինչև արևուն ու աստղերուն մեջ կերթան պտտիլ»30:

7

Վերն ասացինք, որ Սրվանձյանի ու Պարոնյանի համագործակցությունը տևել է ընդամենը երեք և կես տարի (1870 թ. սեպտեմբերից մինչև 1874 թ. մայիս), որից վերջին մեկ և կես տարում Պարոնյանը «Մեղուի» խմբագիր-տնօրենն էր՝ *Սրվանձյանի «խմբագրական օգնականությամբ»*: Այդ կարճատև ժամանակամիջոցում նրանք սրտակից բարեկամներ էին դարձել, ըստ որում «Մեղուն» Պարոնյանի ստեղծագործական կյանքում նույնքան էր հարազատացել, ինչքան որ այն հարազատ էր նրա հիմնադրի՝ Սրվանձյանի կյանքում: «Մեղուի» գրական-գաղափարական պայքարի մթնոլորտումն է շիկանում Պարոնյանի ստեղծագործական միտքը. այդ պայքարումն են ամրանում նրա երգիծաբանական հանճարի բևերը՝ հետագա անհասանելի բոիշքների համար: Ու որպես երգիծաբան, Պարոնյանն ընդհանուր ճանաչում գտավ «Մեղուի» միջոցով: Այդպիսով նախընթաց շրջանում Սրվանձյանի անունով նշանավորված «Մեղու»-ական գրական-գաղափարական ուղղությունն, այս տարիներին նշանավորվեց նաև Պարոնյանի անունով:

Բայց, իհարկե, սխալ է այս շրջանի «Մեղուն» կոչել միայն Պարոնյանի անունով, բեկուզ և վերջին երկու տարում նրա ստեղծագործության բաժինը համեմատաբար ավելի մեծ է «Մեղուի» էջերում: Այն պետք է կոչվի երկուսի անունով՝ Սրվանձյանի և Պարոնյանի «Մեղուն»:

Զէ՞ որ «Մեղուն» վերջնականապես դադարել է հիմնադիր խմբագրի կենդանության օրով. նրա անժամանակ մահից (նա ընդամենը 43 տարեկան էր) մոտ երկու ամիս առաջ: Համոզված, որ իր երիտասարդ բարեկամն ու գինակիցը գրական-լրագրական գործունեությունն իրենից հետո հավատարմորեն շարունակելու է մեղուական ուղիով՝ Սրվանյանն իր թերթի հրատարակության իրավունքը՝ առանց որևէ հատուցման, սիրով նվիրում-հանձնում է Պարոնյանին: Այդ մասին վկայում է անվանի բանասեր Հրանտ Ասատուր Պարոնյանի մասին գրած իր հայտնի կենսագրական ակնարկում: Այդ փաստը երախտագիտությամբ խոստովանվել է նաև Պարոնյանը՝ «Մեղուի» ժառանգը հանդիսացող «Թատրոնը» հրատարակելիս:

Այս նոր երգիծաբերքն, ըստ էության, սովահյանական-պարոնյանական «Մեղուի» անմիջական և օրգանական շարունակությունն է, դա՝ ըստ էության «Մեղուն» է նոր անունով, գրական-գեղագիտական և հասարակական-քաղաքական միևնույն դավանանքով, այն տարբերությամբ միայն, որ Սրվանյանն իր «Մեղուի» օրինական գաղափարական ժառանգի ժողովրդանը-վեր գործունեությանը բախտ չունեցավ մասնակցելու: «Թատրոնի» առաջին համարը լույս տեսավ այն օրերին, երբ «Մեղուի» հիմնադիրն անհուսալի հիվանդ էր, բայց այնուամենայնիվ նա՝ գոնե բախտ ունեցավ կարդալու իր սրտագին բարեկամի երախտագիտական զգացմունքով լի խոսքը «Թատրոնի» առաջին համարում:

««Թատրոն»-ին հրատարակության սկսած ատենին երախտագիտությունը պարտք մը կրդնե մեր վրա՝ հրապարակով շնորհակալությունն հայտնել «Մեղուի» արտոնատեր մեծապատիվ Հարություն էֆ. Սրվանյանի, որ «Մեղուի» հրատարակության իրավունքը ձրիաբար մեզ տալ բաւեհաճեցավ, առիթ տվավ մեզ հրապարակ ելնելու և մեռվսանն ազգին ծառայելու»:

Կարծեմ, որպես երդում Պարոնյանը կրկնում է իր ազնիվ ու անձնուրաց բարեկամի խոսքը, որ գրել էր նա այն նշանավոր «Հայտարարության» մեջ, որով «Մեղուի» խմբագրությունն ու

29 *Նույն տեղում, էջ 137—138։*

30 *Նույն տեղում, էջ 164։*

տնօրինությունը հանձնում էր իր հանձնարավոր հաջորդին, այն իսկ համոզմունքով, որ նա՝ ամենաառաջավոր պարբերականի խմբագրին անհրաժեշտ «հատկություններուն վրա՝ ազգին անկուտի ծառայելու հատկությունն ալ ավելցուցած էր»:

Իր «Միծաղի» առակախոսական այլաբանությամբ «Մեղուի» հիմնադիր-խմբագրին հետմահու կյանքում պատկերելով, Պարոնյանը Կոռնոսի (հին հունական առասպելաբանության մեջ ժամանակի աստվածը) միջնորդությամբ հաղորդում է Սրվանյանի դժգոհությունն իր բարեկամ ժամանակակիցներից ու հետնորդներից, որոնք անարդարացիորեն մոռացել են իրեն: Ակներև է, որ Կոռնոսի միջոցով Պարոնյանն է խոսում:

«Միծաղի» այն հարցին, թե՝

—Ի՞նչ կրնե *Մեղուն* այնտեղ... զոնե հանգի՞ստ է...»,—Կոռնոսը պատասխանում է.

—Շատ հանգիստ է, բայց երբեմն կը տխրե հիշելով, թե բոլորովին մոռացված է յուր բարեկամներեն, կրվշտանա, երբ կտեսնի, որ յուր մատուցած ծառայություններն, արդարև կարեվոր ծառայություններ, բնավ չեն հիշվեր: Մեռած օրն, կրպաստմե ինքն, հաղիվ գտնվեր է շորս հոգի յուր դագաղն տանելու համար, եթե անոնք ալ չգային, խեղճը պիտի ստիպվի եղեր քալելով երթալ ինքզինքը թաղելու»[31]:

Թեև «Միծաղի» այլաբանական լեզվով, բայց ճշմարտացի Պարոնյանը պատկերել է իր մեծանուն նախորդի ու բարեկամի տխուր և անշուք հուղարկավորությունը, որին ինքը՝ Պարոնյանն էլ մասնակցել է և հրաժեշտի խոսք է ասել նրա թաղմանը:

Պարոնյանը, միաժամանակ, թե՛ իր ժամանակակիցներին և թե՛ մանավանդ, հետնորդներին հիշեցնում է, որ «Մեղուի» հիմնադիր-խմբագիրը՝ «յուր մատուցած ծառայությունների համար»՝ մշտապես հիշվելու արժանի է, իրենից՝ Պարոնյանից անբաժան:

Ас. Асатрян

АКОП ПАРОНЯН И АРУТЮН СВАЧЯН

Резюме

Юбилей 120-летия со дня рождения одного из крупнейших творцов армянской культуры, гениального сатирика Акопа Пароняна (1843—1891) совпадает с 90-летием со дня смерти основателя сатирической журналистики Арутюна Свачяна (1831—1874).

В истории армянской литературы идейным предшественником и первым учителем Пароняна является Свачян. «Пчела» Свачяна (1856—1874) стала матерью армянской сатирической литературы. Путь, намеченный ее деятельностью, продолжает Паронян, верный ее свачяновским, налбандяновским традициям.

Закономерен тот факт, что во второй период издания «Пчелы»—боевой трибуны революционной демократии (1870—1874)—Свачян и Паронян объединяются в тесном и дружеском сотрудничестве. И если последнее пятилетие первого периода издания «Пчелы» (1860—1865) ознаменовалось идейным соратничеством Налбандяна и Свачяна, то второй период ознаменован соратничеством Свачяна и Пароняна в борьбе против реакционных течений и сил.

В атмосфере литературно-идеологической борьбы, проводимой «Пчелой» Свачяна, зреет и закаляется творческая мысль Пароняна, в этой борьбе крепнут крылья его сатирического гения для будущих недосягаемо мощных взлетов.

Паронян и Свачян дороги нам как своим творчеством, так и своими общественно-политическими идеалами и социальными устремлениями, которые сближают их с нашей эпохой.

---

31 *Հ. Պարոնյան, նկ., հ. 5, 1935, էջ 226։*